

ժուլ է մի ամբողջութիւն միայն թէ թերի:

Գիտմամբ ընդարձակ պատմեցինք զբքի բովանդակութիւնը, որովհետեւ ձախող ժամանակների հետեանքով, չէինք կարծում թէ մեզ կյաջողութի շուտ հրատարակել:

Պատմութիւնը սկսւում է Մահմետով և վերջանում է Սմբատ Բագրատունու ժամանակով, պարունակելով համեմատաբար կարճ ժամանակաշրջան:

Այժմ տեւեկներ, իրաւ սա է Շապուհ Բագրատունու կորած պատմութիւնը, ինչ որ ասել է հանդուցեալ Գալուստր: Մահը վրայ է հասել, նա հիմունքներ չի տուել, կփորձենք կատարել այդ աշխատանքը:

Մետոպ եպիսկ.



### ՅՈՎՀԱՆՆԷՍ Ը. ԿԱՐԲԵՑԻ ԿԱԹՈՒՂՈՍԿՈՍ

(Կենսագրական տեղեկութիւններ)

Ա. Էջմիածնի Հայրապետական Դիւանը առատ նիւթ ունի հայերի ժէ — Ի. դարու պատմութեան համար:

Դիւանից օրաուղոյներ եղել են, առաւելագէտ հանդուցեալներ Ա. Երիցեան և Գիւտ Ա. ա. քհ. Աղանեան: Սակայն նրանց քաղաքը շնչին մասն է այն նիւթի, որ ամբարուած է Դիւանում: Իմբատաբար Դիւանի նիւթերը կանոնաւորուած, դասաւորուած ու ցուցակադրուած չեն:

Միայնական կանոնադրութեամբ, որը հաստատուել է Վեհափառ Հայրապետի կողմից 1919 թ.ի վերջերում, Ա. Էջմիածնում հիմք է դրուել կենդրոնական Դիւանատան, որը պէտք է հետզհետեւ կարգի բերուի:

Չեւնարկած լինելով իմ հերթին այդ աշխատանքը, գործերը դասաւորելիս ձեռքս անցաւ մի գրութիւն, որը Յովհաննէս Ը. Կաթողիկոսի կենսագրականն է համարում:

Համեմատելով Ա. Երիցեանի Կովկասի Հայք XIX-րդ դարում Ե. հատորի այն մասի հետ, որ տեղեկութիւններ է պարունակում Կարբեցու կենսագրութեան վերաբերեալ\*), տեսայ, որ այս գրութիւնը նորութիւններ և տարբերութիւններ ունի:

Գիտենալով որ պատմական դէպքերի մասին որքան շատ

\*) Տե՛ս Բ. հտ. 99, 102, 150—5 եւ այլն երեսներ:

աղբիւրներ ունենանք, այնքան աւելի կպարզուեն նրանք և ահամայից առաջ եկած միակողմանութիւնը կթուլանայ, կարևոր եմ համարում հրատարակել այդ գրութիւնը, որը Դիւանի ձեռագրերի № 232. ձեռագիրն է:

Գրութիւնը կարած տեւոր է, թարազայ, հին, հաստ թղթի վրայ, շունի վերնագիր՝ վերջացած չէ երևում, գրողն էլ յայտնի չէ, ունի ուղղումներ, կան գծած տեղեր:

Գրութեան ոգուց երևում է, որ գրողը Կարբեցու կողմնակից է և ժամանակակից. բայց և լաւ ծանօթ նրա գործունէութեան: Այս գրութիւնից երևում է, որ Կարբեցին այնչափ դրամասէր էր չէ եղել և ոչ էլ այնչափ ուսումնատեաց, որչափով Երիցեանի աշխատութիւնից երևում է: Կարբեցու անձնաւորութեան մի քանի արժէքաւոր կողմերն են երևում այստեղ, որոնք պատմարանի համար կարևոր են, խնդիրը լաւ պարզաբանելու համար:

\*Քաղցր է ամենայն ազգի աւանդել յետադայից դարձանայիշատակ և զքաջափայլ գործս ազգասիրաց և հայրենասիրաց իւրոց առ ի վառել զնոսին ի նոյնպիսի ազգաշահ սիրազորութիւն վասն անմահական անուան և դովութեան և փառավորութեան և առ ի խորշեցուցանելոյ ի մշտատեակն վատանուանութենէ. ցանկալի է և յետադայ դաւակաց ազգի ճանաչել զվաստակաւորս իւր, ընթեանուլ ի դարապատումս և ի տարեգիրս նախանձելի հանդէս բարեմտութեան նոցին և ի սիրամարմնեղէն անխարդախ և անխանդար դրոշմել զայն անմոռանալի սիրազորութիւն սեական տպեալ զսպիտակափայլ երեսօք թղթոյն. զսոյն զայս յայտնապէս քարոզէ և առաքեալն ասելով՝ աղաչեմ զձեզ՝ եղբարք ճանաչել զվաստակաւորս և զվերակացուս ձեր ի Տէր: Ուրեմն հարկ ի վերայ կայ ամենայն ուրուք իրրև զնկար կենդանատիպ առաջի առնել յետադայից դյաւերժական յիշատակութեան արժանաւոր գործս հայոց ազգասիրի և մուծանել զայն ի դատապարտում մատեանս ի յիշատակ յաւիտենից:

Սմին այսմ զհետ երթեալ նախնի վարդապետաց մերոց թողին յաշխարհի իւրեանց տեղ զերևելի երևելի մատենագիրս, յորս լուսարանելով զամենայն իրողութիւնս ազգայնոց մերոց մանաւանդ վառելոց ի սէր ազգի և բոլորապտուղ նուիրելոց զինքեանս օգտի նորին, յայտնեալ են միանգամայն և զամենայն իրս արժանաւորս խնդութեան և ողբոց, ի ժամանակի յորժամ Հայաստան այս վատաբաղղ մասն աշխարհի իրրև շուշան փշա-

պաշար կամ իբրև որոջ գալլապատեալ ի դրացի ազանց նեւաճար լինէր յամենուստ և յաւրախութեան գորտօսք ըմպէր, եղեալ միանգամայն ծով արեան և ծով արտասուաց և տուն սղբերգութեան:

Արդ եթէ դանցս այնպիսի դասն ժամանակի արժանաւոր խնդութեան և սղբոց անկաւոր կղև ի դիբ արտնել ի յիշատակութիւն յեանոցս, ապա լաւ ևս է գեղահիւսուած բանից պսակօք սգնազարդեալ զգովանի վատտակս Վեհափառ Հայրապետիս Յովհաննու Տրդ կարրեցոյ արձանագրել ի տարեգիրս մեր՝ մինչդեռ բարձեալ է ի մէնջ այն գաճութիւն ժամանակի, այն սղբոց հնչմունք աղիօզորմք այն ժանտարարոյ դրացիք մեր խաւտ, և շնորհիւ քրիստոսազօր կայսերն սուսաց ընդ հովանեաւն սորին վեհափառութեան ճաշակեմք անողարար գրարօրութիւն ընդ քաղցր հանգստեան, խնդամք երգելով և երգեմք խնդալով, օրհնեալ է աէր, որ աչ ևս զմեզ յարս ատաւանց թշնամեաց: Ասրին վեհափառութեան ստեմ, որ նախահանդէս գերադանցեալ զբազժօք նախօրդօք իւրովք հանճարեղ ծննդովք մտաց և շանաւոր ներգործութեամք, յօգուա էջմիածնի հոշակելի հանդիպնացաւ ի բազում մասունս աշխարհի և խոհական կանսնաւորութեամք իւրով յինքն ձգեաց զսիրտ կայսերն մեծի նիկօրայի և և ամենայն ժողովրդեան ազգին իւրոյ և սատրաղբելոցն ինքեանս Այն քարերաղղ է, եկեղեցին հայաստանեայց, որում գլուխ է սա. բարերաղղ և ազգն հովուեալ զաւազանաւս հայրապետութեան սորին, և ևս նայնպէս, որ զառնամս ի կարդ քանի խնոյ և ի սկզբնաւորութիւն նոճիածած նիւթոյ պատմութեան սկիզբն արայեալ ի ծննդենէ անտի հայրապետիս մեծի և արկանել ի ջամբան սրբոյ աթոռոյս էջմիածնի և վասն ապագայ բարեմխտ ազգասիրաց ընծայ պատուական:

Արդ հոգեհարազատ մշակս սրբոյ ատաքելական եկեղեցւոյ Քրիստոսի, որ ի Հայաստան աշխարհի, Յովհաննէս կարրեցի ծնաւ ի 20 սեպ. 1761 տմի տեան ի ձորապիզն Երեան քաղաքի սերանօր բնակէին ծնողք իւր տեղափոխեալք ի կարրեոյ\*) գերբննական ծննդեան ի ծոցոյ սուրբ աւագանին արժանապէս անուանեցաւ Յովհաննէս որ է շնորհք կամ շնորհաւորութիւն. այն շնորհք մեծ սուա հայաստանեայց սրբոյ եկեղեցւոյ, նաև յԱստուծոյ և ի կայսերէ և յազգէն, որ յօրէ անտի

\*) Արիցեան բ. հ. 25 եր. ատում է ծնունել է. 1762 թ ևս. Յովհաննապամբումս

վանական կոչման իւրոյ յամենայն զէպս հանդիսացաւ անձնադիր վասն եկեղեցւոյ և հօտի նորա և զմեծամեծ շնորհս արար նոցին՝ բաղմարդիւն մտաց իւրոց և շնորհալի հանձարոյ, որ ի ստորե գծագրեացին:

Շնորհալից այրս Աստուծոյ տակաւին ի տիս անդ մանկութեան իւրոյ վասեալ ի սէր վանական հոգևորականութեան բազում բանիւք ողորանօք զկամս ծնողացն ամեալ ի հաճութիւն և ի հաւանութիւն դիտարութեան իւրում, և մտա ի վնս սրբոսն զէորզեայ՝ որ ի մօզնի գեղջ՝ յաշակերտութիւն վանահօր տեղւոյն ծերունի բարսեղ արքեպիսկոպոսի և առ սաս նորա կրթեցաւ յուսմունս ըստ ներելոյն միջոցաց աջոր ժամանակի. բայց քանզի սա էր բնական ուշիմ և սրամիտ, խտանեալ գրնականն զայն ընդ ստացականին զգերբնական իմն յանձին տարերէր յառաջագէմ զարգացումն ի կրթականութեան զյաջողակութիւն և յամենայն գործս եկեղեցականութեան պատշտնեալ: Ի փոխել յիշեալ ծերունւոյ արքեպիսկոպոսին բարսղի ի վերնագաւառ բնակութեան մի յերեկի միաբանից սրբոյ Էջմիածնի պետրոս եպիսկոպոս այր զիանական և բարեհամբոյր զանկացօղ բարեաց աթոռոյ տեսեալ, զբարեխորհուրդ ըզձականութիւն նորին և ջերմեռանդութիւն առ հոգևորական կոչումն ընդ նմին և զսիրտլի կորսվամութիւն կից սասումնասիրութեան և բարեբարոյութեան ընկալաւ զնա ի ներքոյ շնորհաց իւրոց և խնամոց և ըստ կարելւոյն կրթեաց զնա ի բազում վարժս ուսմանց և եկեղեցական արարողութեանց, մանուսնդ սասուածաշունչ գրոց, որովք նա ի կարգաւորութեան յամենայն զէպս քօրոպութեան իւրոյ և տէպէս ասենախօսութեանց յաջողակս չափէր զիւր պաշտօն ի շինութիւն հաստացելոց:

Եւ իբրև ըստ ընտրութեան ծայրագոյն գլխոյ հայաստանեայց եկեղեցւոյ զէպ եզև արքեպիսկոպոսիս աշմիկ զնալ գործով նսւիրակութեան ի Թօխաթ քաղաք սանկատանի տարաւ ընդ իւր և զգաստիարակեալն յինքննէ զյովհաննէս կարբեցի, ուրանօր սախիալ յանպայման խանկութենէ նորա և ի բարեկրօնութենէ ձեռնադրեաց զնա ի սարկաւաղ ի 1781 ամի և սպա ի վարդապետ ի 1786 ամի, հրաման տալով նմա յամենայն շտրաթ և կիւրակ, սուրս մխիթարել զժողովուրդս տեսան քարոզութեամբք և գի ի վիր անգր ստացաւ իէ քաղաքակիրթն էր ի սրբազան սաստհին և նոր կտակարանաց, վասնորոյ և զերմարդկային իմն հանձարով ստեղծանէր զբարոզս, որովք և ոչ սակաւ պատուասիրիւր ի ժողովրդականէ անտի նայն և յարքեպիսկոպոսէն իւրմէ և ի գաստիարակէն:

Յեա միջոցի ինչ իբրև վերադարձաւ նա ընդ արևելոյն իւրոյ

յէջմիածին, տեսեալ սրբազնակատար հայրապետին հայոց դու-  
կասու զուշիմութիւն նորա դարիականութիւն և զգովանի գոր-  
ծունէութիւն յարդիւնատրութիւն սրբոյ եկեղեցւոյ, կարգեաց  
զնա զկարրեցին Յովհաննէս վարդապետ վերակացու մեծազիբ  
շտեմարանացն աթոսոյ և սեղանատան նորա. ի սոյն յայսմ վե-  
րակացութեան շահեցաւ նա զառաւել ևս միջոց հաւատարիմ  
ցուցանել ամենեցուն զիւրն պիտանեաւորութիւն և զհարազա-  
տութիւն եկեղեցւոյ սրբոյ և լինել սիրելի յաչս հայրապետին և  
բոլոր սրբազուժար միաբանութեան:

Յետ քանի ամաց այն ինչ սկսաւ սաստիկ կատաղութիւն  
ժանտախտին ի բայազիդ քաղաքի ժողովուրդք տեղւոյն խնդրե-  
ցին ի հայրապետէն առաքել անդր զկողամուխ սուրբ Գեղարզն  
Քրիստոսի յօղնութիւն ի ժանտախտէն, աստէն ևս յատեան մա-  
տուցան ասաջի հայրապետին մեծի գերօրինակ բազմափորձ հա-  
ւատարմութիւնք նորին, մինչ զի ի միջոյ ըազմաթիւ արհեստց,  
եպիսկոպոսաց և վարդապետաց աթոսոյ ամա միայն յանձնեցաւ  
հաւատացաւ նշանն այն սուրբ թողում յիշատակել աստանօր և  
զայն թէ որպիսի ջերմեանդութեամբ յանձն ասնոյր նա կատա-  
րել զհրաման գլխոյն իւրոյ ի սիրտումն հօտին քրիստոսի մո-  
ռացեալ բոլորապէս զվտանդ անձինն ասանձին, թողում և զայն  
թէ որպիսի ընտիր քարոզութեամբ և վարդապետութեամբ միսի-  
թարէր նա զժողովուրդն բայազիտոյ վշտակըեալ ի ժանտախտէն,  
որոց և յոյս մեծ ընծայէր թէ վասն մեռելոց, թէ վասն ախտա-  
կրելոց և թէ վասն կենդանեաց. բայց ոչ թողում տակ և զայն,  
թէ սուրբ լուեալ կամ տեսեալ զայսօր ժամանակի, եթէ ոք  
ի հայրապետաց յանձնեալ իցէ լոկ վարդապետի զայն յատուկ  
պարճանք սրբոյ հայաստանեայց եկեղեցւոյ, զայն փրկութենա-  
գործ նշան տէրունեան զկողամուխ գեղարզն սուրբ, այլ նա միայն  
է՛ որում հաւատացաւն այն ի վարդապետութեան անդ նորա և  
այն՝ վասն բազմատեսակ հաւատարմութեանց նորա և ջերմե-  
տանդութեանց առ աթոսն սուրբ և առ գերամայրեալ աթոսակալ  
նորին:

Յաւարտ բազմադիմի քարոզութեանց իւրոց թողեալ ի սիրտ  
և ի միտս բոլոր ժողովրդեան բայազիտոյ դանմուսաց յիշատակ  
բարեմտութեան իւրոյ և բարեկրօն վարդապետութեան վերա-  
դարձաւ յէջմիածին առ առաքիչն իւր, յորմէ և պսակեցաւ պատ-  
ուական խառայ փիլանաւ, որ յայնմ ժամանակի էր երեւելի պարզե  
հայրապետական և եպիսկոպոսաց միայն վայելչական:

Վերնախնամ տեսչութիւն, որ ի գաղափարի դպրութեան  
ամէնիմաստ անօրէնութեան իւրոյ նշանակեալն էր յետ ժամա-  
նակաց առնել զնա ծայրագոյն կառավարիչ եկեղեցւոյ իւրոյ և

ժողովրդեան ազգի հայոց, էսծ զնա ամենազօր աջոփն իւրով  
 ի դանագան ծագս աշխարհի, ուր բնակին մերազնեայք, առ  
 ի իւրաքանչիւր կողմանցն և ժողովրդոց տեղեկանալ սրպիտու-  
 թեանց և սովորութեանց և պէսպէս հանդամանաց, զի ի հայրա-  
 սկտանալն կարասցէ յաջողակապէս կատարել զգերագոյն իւր  
 պաշտօն:

Ուստի և նուիրական պաշտօնաւորութեամբ տաքեցաւ նա  
 ի կողմանս մշտ և այլ վիճակաց տաճկաստանի, և ապա ի սարսա-  
 յիսպահան քաղաք քաղմանայ: Աստէն բացաւ նմա վերստին այլ  
 աստարեղ նորոգ հանդիսի փառաւորութեան իւրոյ և իւր առաքո-  
 զին միսիթարելով գտարարնակ համազգիս իւր քաղմապատիկ քա-  
 ըղութեամբք և ստողջադատ վարդապետութեամբ, սրովք և թող  
 անդին և անդ գանուն բարի յաւերժական յիշատակութեամբ  
 պսակեալ և ի սիրտ իւրաքանչիւր հայոց և ի յիշողութիւն անեղծ  
 գրոշմեալ:

Յետ ժամանակաց այն ինչ անկան վրդովմունք ի հայս  
 յաւուրս դաւթի և գանիէլի կաթուղիկոսաց, և պաշարեցաւ երևան  
 քաղաց(ք) ի գօրացն կայսերութեան ուսաց եղելոց ընդ իշխա-  
 նութեամբ նիսվիտայեի գեներալի, տեսեալ սոյն այս հարազատի  
 աթոռոյ ամենայն կայք տանն աստուծոյ յերեսաց պատերնազմին  
 յաւար դնացին կապեալ դերկուս բևինս կայացեալս յեկեղե-  
 ցա[կա]ն թանգագին անօթից և սրբութեանց հարազատ ցուցա-  
 կաւ՝ որ արարեալն էր ձեռամբ կաթուղիկոսին գաւթի, տարաւ  
 ի տփխիս քաղաք յապահովութիւն և յանձնեաց անդ նդեալ  
 արքեպիսկոպոսին յովհաննու կենդանակ նահատակն կոչեցելոյ,  
 և ապա ի գաղարիւ վրդովմանցն գարցոյց անգրէն յէջմիածին  
 ըստ իսկական ցուցակին: Որոյ վասն և ի բաղում հայազգի իշ-  
 խանաւորաց յայլ և այլ աշխարհաց ընկալաւ գրազում թուղթս  
 շնորհակալութեան յազագս պահպանելոյն գաթոտապատկան անօթս  
 ի ձեռաց ասպատակութեան:

Եւ իւրեկ գտելի նիսվիտայեի գեներալ կոմս դուղովիչ կու-  
 սակալ վրաստանի հարկաւոր գատեցաւ զուշիմ ոմն վարդապետ  
 ի կառավարութիւն հայազգի բաղմութեան գաղթելոց ի հայոց  
 նահանգէս յերկիր բամբակածորոյ ընդ հովանեաւ թեոց հզօր  
 գօրարանակին ուսաց և ով այլ ոք ընտրեցաւ յայն պաշտօն,  
 բայց եթէ վարդապետն կարրեցի յազագս բարեք կառավարու-  
 թեան իւրոյ և հանձարեղութեան:

Բարեջան հովիւս այս հօտին Քրիստոսի և անձանձիր մշակս  
 եկեղեցւոյ յայս յանձնարարութեան տէրունեան աշալուրջ իւր  
 կառավարութեամբ շահեցաւ ևս զնոր համբաւ բարի անուան և  
 զնոր անուն բարեկրօն վարդապետութեամբ գարդարեալ. մտեալ

սորա յայս պաշտօն կառավարութեան գաղթելոցն, ձեռն ի գործ  
 էարկ քարոզութեամբ աստուածային բանից յորդոր լինել ժողո-  
 վրդեան համբերել ամենակերպ պակասութեանց ըստ որում բա-  
 քումք ի նոցանէ յաւուրս պատերազմին և գաղթականութեան  
 իսպառ դրկեալ էին ի կայից և յապրուստից. իսկ զհարուստս  
 ի նոցանէ այնպիսի ազդու քարոզութեամբ շարժէր ի ջերմեամու-  
 դութիւն մինչև ոչ խնայել նոցա իւրք իրօք օգնել շքաւորաց և  
 տառապելոց և զօրացուցանել զնոսա իսկ թէ ինքն որքան ձե-  
 ոնտու եղև շքաւորացն այնոցիկ պէսպէս կենցաղական պիտոյիւք  
 և յուսադրութեամբք, թողու՛ աստէն ի գիր արկանել առ ի խոյս  
 յերկարարանութենէ:

Եւ իբրև գայտու ժամանակաւ յաջողեցաւ կաթուղիկոսին  
 դանիէլի գահակալել յէջմիածին, թուղթ հրաւիրանաց գրեաց  
 ի բամբակաձոր առ նա գալ յէջմիածին և ի վարձ բաղմամեայ  
 իւր հարադասութեանց ցուցելոց ազգի, աթոռոյ և տէրութեան  
 ձեռնադրել յեպիսկոպոս. այլ նա ի կշիռ եղեալ զամեն իւր, քա-  
 դաքավարութեամբ իմն խոյս ևս ի հրաւիրանաց անտի, և լաւ  
 համարեցաւ մխիթարել զպակասաւոր ժողովուրդն իւրովք քարո-  
 զութեամբք զի մի անձնատուր լիցին յուսահատութեան առ աղ-  
 քատութեան: Այլ իբև միւս ևս անգամ ընկալաւ զհայրապետա-  
 կան հրաւիրանաց կոնդակ ի 1802 ամի, ոչ ևս ընդիմացեալ  
 այնուհետև կամաց ծայրագոյն հողևոր իշխանութեան եկաւորե-  
 ցաւ յէջմիածին և արժանացաւ սուրբ աստիճանի եպիսկոպոսու-  
 թեան, որում կանխաւ արժանի էր ըստ բաղմաջան վաստակաց  
 իւրոց և բարեկրօնութեան. տես զու բարեմիտ անգասէր և ըն-  
 թերցող, տես զաստուածային տեսչութեան զտնօրէնութիւն և  
 սքանչացիր, տես և զկշռութիւն անձին հողևորականիս այսորիկ  
 զի փառք և պատիւ զհետ պնդեն սորա, և սա բացէ ի բաց  
 փախչի մեծահոգութեամբ իւրով ի փառաց անտի, զոր փոքրոզի  
 փառամուք միշտ ամենայն անհամբերութեամբ ցանկան ի ձեռս  
 բերել, թէ արժանապէս և թէ անարժանապէս:

Նորընծայ եպիսկոպոսս այս կարրեցի յետ սուղ ինչ միջոցի  
 զինի եպիսկոպոսանալոյն առաքի ք ձեռնադրողէն իւրմէ, նուր-  
 բակ ի թոխաթ և ի թէմա նորա և թէ որպիսի բարեջանութեամբ  
 յինքն գրաւեալ զսիրտ տեղւոյն ժողովրդեան և կանգնեալ ի յի-  
 շողութեան իւրաքանչիւր զմի մի արձան յիշատակի վերադարձ  
 տայ յէջմիածին առ ծնողն իւր, աւելորդ համարիմ երկարա-  
 բանել:

Յանցանել կաթուղիկոսին Դանիէլի զսահման պարկեշտ  
 կենաց իւրոց ի 1808 ամի և ի բաղմել եփրեմայ ի տեղի նորա  
 յաթոս հայրապետութեան հայոց, այն ինչ եղև խորհուրդ մեծ

ի միարանութեան էջմիածնի, թէ զո՞րք ի միջոյ արժանի իցէ առաքել ի պօլիս առ ի հանել զհրովարտակ սուլթանին օսմանցւոց ի վերահաստատութիւն կաթուղիկոսութեան եփրեմայ (որ սովորութիւն էր յայնմ ժամանակի) իսկոյն աչք ամենայն խորհրդականացն միամեղ ուղղեցաւ առ հպիսկոսոս կարբեցի, և որպէս գործով նոյն և բանիւ որոշեցին առաքել զսա անդր ի պօլիս, սա թէև ուշիմութեամբ իւրով գիտաց թէ յայնմ ժամանակի անճնարին էր ի գլուխ հանել զայնպիսի յանձնարարութիւն հայրապետին իւրոյ վասն իրիք իրիք պատճառաց նիւթեւոց ի թըշնամեաց մերս եկեղեցւոյ մանաւանդ յաղագս բաժանելոյ հայոց տաճկաստանի ի դաւթեան և ի դանիէլեան, սակայն ըստ որում յաւուրց անտի մանկութեան իւրոյ սովոր էր ամենայն հնազանդութեամբ փութալ ի կատարումն կամաց իւրոց մեծաւորաց, նմին իրի և ոչ կամեցաւ զդէմ ունիլ վեհափառականն հրամանին: Վերագարձեալ սորա ի պօլսոյ, հրաման ընկալաւ զնալ ի վիճակս գանձասարի պաշտամամբ ծայրադոյն նուիրակի և զի յայնմ միջոցի գծտութիւն մեծ կայր ի վիճակի յայնմիկ յաղագս միաւորելոյն զայն ընդ վիճակացն գլխաւոր աթոռոյն էջմիածնի, վասնորոյ և բարձումն եկամուտ գծտութեան կարօտանայր սորին բաղմափորձ հանձարոյ և ողջամիտ վարդապետութեան ամենայն հնազանդութեամբ վեհին իւրոյ հրամանի գնացեալ սորա անդր ոչ թէ միայն զնուիրակութեան կատարեաց պաշտօն ամենայն բարեկրօնութեամբ և ոչ թէ միայն արմատակաւոր արար զգշտութիւն իսպառ, այլ նաև բաղմօք սիրաշահեաց գծողովուրդս տեղւոյն և ամենայն մասամբ հնազանդեցոյց զնոսա աթոռոյն էջմիածնի և գանձակալի նորա և բարի անուամբ վերագարձ արար առ առաքիջն իւր:

Ի 1811 ամի ստիպեալ հայրապետին եփրեմայ ի բաղմադիմի վաստակաց սորա, կարգեաց զսա աւագ լուսարար սրբոյ Աթոռոյն էջմիածնի, այս պաշտօն թէև ծանր է յոյժ և պարունակող յինքեան զոչ սակաւ վաստակս և սրտամաշ տքնութիւնս, սակայն է առաջին գործ յէջմիածնի զկնի կաթուղիկոսական կոչման. Յետ միջոցի ինչ վշտադնեալ հայրապետին մեծի ընդ անդադար տարածայնութիւն, որ ք մէջ հայոց պօլսոյ, վերստին զյոյս իւր եղեալ յաւաղ լուսարարս այս, առաքեաց զսա ի պօլիս առ ի համօղել զնոսին, ի հանգարարութիւն և ի խաղաղութիւն բաղմարդիւն իւրով հնարաւորութեամբ և խոհականութեամբ, իսկ սա զի՛ որ միշտ գոգցեա ուխտեալն էր մինչև ցվերջին իւր շուճն շինայել ծառայել օգտի ազգային աթոռոյ, ոչ հայեցեալ բնաւ յալիս ծերութեան իւրոյ յանձն կառ գնալ վերստին ի Գօլիս քաղաք ի 1820 ամի, սակայն բերմունք դառն ժամանակին, յո-

բուժ ասպատակներեալ էր յունաց ի դրանէն օսմանցւոց, և բարձրացեալ ընտանի թշնամիք ուղղափառութեան մերոյ և կեղեցւոյ, կրկին խոշնդակն եղին պարարութեան բարեհամբոյր զխառնութեան նորա և հայրապետին, տեսեալ մերազնեայ բարեպաշտից, թէ անյաջողութիւն բերի յայսմ ամենայնի, ըստ որում նախածանօթ իսկ էին սրբազան հովուիս և կեղեցւոյ և բարեկրօնութեան սորա, ետուն սմա զնուիրակութիւն թեմիցն կոստանդնուպօլսոյ և այնպէս բազում արդիւնաւորութեամբ շահեալ զսա, արձակեցին անդէն յաթոս էջմիածնի:

Հասեալ սորա ի կարին քաղաք, ի 1825 ամի և լուեալ թէ հայրապետն ի ր զգուեալ ի նեղութեանց պարսից և պարտատեարց աթոսոյ, խոյս տուեալ է ի վերս, ինքն ևս ևզ ի մտի ուղղակի առ նա զնալ, և մինչև այս միայն ընկալաւ ի ճանապարհին զհրաւէր ի միարանութնէն և ուսէյն իսան սարգարէն Երևանայ փութացուցանել զգալուսա իւր յէջմիածին. խորազգաց լեալ սորա՝ բարւոք վարկաւ դիմել յէջմիածին ի կառավարել զայն զի մի միարանութեանէն յանտերութեանէն ցիրուցան լիցի և յաւէտ ևս վնաս համբուրեսցէ աթոսն սուրբ:

Լուեալ Հուսէին իսան սարգարին, թէ ևկեալ հասեալ է առ յէջմիածին, հրաւիրեաց առ ինքն իրբու թէ վասն ինչ ինչ վսեմ խորհրդակցութեան, ու յետ բազմադիմի խօսից և շնորհելոց սմա զխիլայ մեծագին ի դիմաց արքայորդւոյն պարսից, ևցոյց սմա զհրովարտակն և յայտնեաց զիւր և զարքայականն անդառնալի կամս յանձնելոյ սմա զկաթուղիկոսութիւն ամենայն հայոց ի տեղի տարազրելոյն եփրեմայ. բազում բանիք յորդորէր զսա ի յանձնատուի կաթուղիկոսութեան նախ պարսկական ողորանօք ապա թէ իրր պաշտպան ելիցի սմա և աթոսոյն և զողորմութիւն արքային պարսից և արքայորդւոյն դարձուցէ ի վերայ աթոսոյն և հուսկ ապա լուեալ դրացասական ի սմանէ զպատասխանի սպանայր զչարաչար նեղութիւնս. սակայն ոչ իւրք կարաց բռնաւորն համոզել զսա ի կաթուղիկոսութիւն, այլ հաղթահարելով յիմաստուն և յազգու պատասխանատուութեանց ձերունոյս, զիջաւ ի խորհոց իւրոց և արձակեաց զսա ի պահպանութիւն աթոսոյն:

Բարեմիտս այս հովիւ հօտին Քրիստոսի ի 1830 ամի կարգեցաւ առաջնորդ վիճակին հայոց վրաստանի ըստ ընտրութեան կաթուղիկոսին եփրեմայ և գրաֆ պասկելիչ կուսակալին վրաստանի. սա ի մտանել անդ ի կառավարութիւն ինքեան յանձնեալ վիճակի զստաջինն ձեռն ի գործ էարկ լուսաւորել զմանկունս ազգի, վասնորոյ և բարեկարգել կամելով զուսումնարան տեղւոյն, սահմանեաց զյատուկ ժողով խնամարկութեան ուսումնարանին,

հասցրատեալ զայն և ի կողմանէ ծայրագոյն մարմնաւոր իշխանութեան, յորում անդամք էին հայազգի երեւելիք. որ ի Տփլիս տալով նոցա դառանձինս յօղուածս կարգադրութեան ի կառավարութեան ուսումնարանին և զհարկաւոր հնարս ի պահպանութիւն այնորիկ: \*) Սա զօր ամենայն ծփար ի հոգս բազմածուփս առ ի գտանել զհնարս ազատութեան էջմիածնայ աթոռոյն ի բազմակուտակ պարտուց, զորոյ զկէս մասն կանխաւ հատուցեալ էր իւրով արիաջանութեամբ:

Հոգք սորա օժանդակութեամբ վերին տեսչութեան շեղինքնաւ ի դերև, այլ եզիտ հնարս և վճարեաց զպարտսն մնացեալ մինչև ցհնգևասան հազար թուման է որ ի բարելի թէմէն վրաստանի յորում առաջնորդութիւն արար զփօքր միջոց, և է որ՝ յիւրոց սեփական արդեանց, զոր ժողովեալ ունէր ի ձեռն բազմամեայ հովտութեան իւրոյ նոյնպէս ի պէսս աթոռոյ: \*\*)

Ի սոյն յայտ ժամանակի տեսեալ հայրապետին եփրեմայ թէ պակասեալ են կենդանական կարողութիւնք իւր, և ինքն բուրբապէս զուրկ գօլով ի տեսութենէ և ի լսողութենէ կայ ընդ ծանր բեռամբ ծերութեան և այլ ևս ոչ ուժէ վարել զիշխանութիւն հայրապետութեան ըստ վայելչականին հրաժարեցաւ յիշխանութենէ անտի իւրմէ, և յետ երկիցս և երիցս կրկնելոյ նորա զիւր հրաժարական, եղև յէջմածին բազմահոյլ ժողով ազգային՝ կայացեալ յամենատեսակ հողերականաց և աշխարհականաց, ուրանօր բոլոր անդամք ժողովոյն ընտրեցին ի կաթողիկոսութիւն զմեծանուն արքեպիսկոպոսն զայս Յովհաննէս կարբեցի, որ ըստ հաստատութեան և հաւանութեան թագաւոր կայսերն արժանաւորեցաւ բազմիլ ի գահ էջմիածնի օժմամբ սուրբ հոգւոյն ի 8 նոյեմ. 1831 ամի:

Աթոռս այս թէև շնորհիւ քրիստոսագօր տէրութեան սուսաց ազատ կայր ի բունաւորական իշխանութենէ պարսից, սակայն բոլորովիմբ զրկեալ կայր յամենայն բարեմասնութեանց յերեսաց գառնաշունչ ազգին պարսկական. վասնորոյ արթուն հովուապետս կամելով և յետ հայրապետութեան իւրոյ զնոյն ազգաշահ ներգործութիւնս ունիլ զորպիսի մինչև հայրապետութիւն իւր արարեալ էր, իսկոյն ձեռն էարկ ի մեծածախս շինուածս յորում զետեղի այժմ սիւնհոդոսն էջմիածնի և զիւանատուն նորա. վերանորոգեաց զտպարանն. անգործ մնացեալ ի բազում ամաց

\*) Համեմատել Ա. Երեցեան Բ. հատ. եր. 99. որ այլ կերպ է ներկայացնում կարբեցու:

\*\*), Համեմատել Երեցեան Բ. հատ. եր. 98—105. որ հակառակն է այս տեղեկութեան:

հետէ. երաց գյատուկ ուսումնարան վասն վանական հոգևորակա-  
նաց կարգաւորեալ գայն յեւրոպացի ձև. կարգեաց ի նմին վար-  
ժապետի դմարտան թաղիադեանց եկեալն ի հնդկաց այլ գիտակ  
բուն լեզուի հայոց. անգղիացւոց, և այլոց. յետ նորա գԳրթգորն  
Շաքարջեան եկեալ ի կարնոյ վարժապետ անուանի բազմամեայ  
դասասացութեամբ. և ապա զկնի մահուան նորա կարգեաց կա-  
ռավարիչ աւագ վարժապետ հայկարանութեան և աստուածարա-  
նութեան դաւագ քահանայն հայոց վրաստանի զԲասնակն Սա-  
հասունեանց, որ հմուտ էր բազում լեզուաց և երևելի եղև թարգ-  
մանութեամբ պէսպէս շահեկան մատենից և շարադրութեամբ  
դաստակեան գրեանց յօղուտ ուսումնարանին էջմիածնի յորում  
հետզհետէ յաւելաւ թիւ կրտսեր վարժապետաց հայ և սուս լեզ-  
ուաց: Այս ուսումնարան յընթաց երկուց ամաց այնքան յառա-  
ջագէմ դարգացաւ, մինչև բազումք յաշակերտաց իւրոց աւար-  
տեալ զքերականութիւն, զճարտասանութիւն, զհրեշտակարանու-  
թիւն և զմասունս ինչ աստուածարանութեան սա ռոս յիշեալ  
աւագ քահանայի ընտրութեամբ սիւնհոդոսին կարգեցան դասա-  
տու վերոյգրեալ առարկայիցն և շարադրեցին զգիրս է որ ար-  
ձակ, և է որ ոտանաւոր արժանաւոր տղադրութեան ևս բազում  
ճառս և քարոզս և գրուատու:

Եւ ոչ այսչափ միայն, այլև աստուածընտիրս հայրապետ  
յետ բազմելոյն ի զան առաքեալ ի մոսկով ի ճեմարան լազար-  
եանց զչորս գպիրս էջմիածնայ զյովհաննէս Սիմէոն աղայեանց  
զմարութէն աէր մարութեանց զյակովըն լազարեան և զսարգիան  
շահինեանց յուսումն լեզուաց և արուեստից. առաքեաց և զեր-  
կուս որբ աղայս զյովհաննէան ամփանդեանց և զյովհաննէան  
աղարեանց ի մոսկով յուսումն նկարչութեան, զառաջինն յարքունի  
ճեմարան պատկերահանութեան և արհեստից, իսկ վասն երկ-  
րորդին վարձէր զնկարիչ վարժապետս, առաքեաց և զկարապետ  
անուն վասակեանց որբ ազգային յարքունի յակադեմիայն յու-  
սումն բժշկականութեան ի պէտս միաբանութեան էջմիածնի և  
վասն սոցա ամենեցուն շինայեաց ծախել զդրամս յանձնականաց  
իւրոց, այլ քաջ կալաւ հոգ, որով և ոչ ելին ի դերև վաստակք  
իւր, այլ իւրաքանչիւր ոք ի վերոյգրելոցն պիտանութեամբ իւրով  
ազգին և աթոռոյն շափին զփոխարէնն երախտեաց առնս Աս-  
տուծոյ:

Յետ զայս ամենայն ի զլուխ հանելոյ բազում ազգասիրա-  
կան հգամբք կամք եղեն վեհափառ հայրապետիս մեծի տալ  
զճաստատուն ընթացս կառավարութեան սիւնհոդոսին էջմիածնի  
ըստ եւրոպացի լուսաւորեալ եղանակին, վասնորոյ բազում աշ-  
խատանօք ստացաւ զբարձրագոյն բարեհաճութիւն թագաւորին

կայսերն նիկողայոսի առաջնոյ հաստատել զլուսաւոր սիւնհոգոսն և տալ նմին զհարկաւոր միջոցս առ բարւոք տնտեսութիւն օթոսոյն էջմիածնի:

Ը 1835 ամի ոչ բնաւ հայեցեալ ի ծաղկեալ ծերութիւն իւր և ի տկարութիւն ազգաշահ անձին իւրոյ, գնաց անձամբ անձին իւրոյ ի վիրս ի օփխիս քաղաք և ի ձեռն միջնորդութեան կուսակալին վրաստանի յինքն ձգեաց զողորմութիւն կայսերական մեծութեան և հաճեցոյց գնա շնորհել օթոսոյն էջմիածնի զամենայն օթոսապատկան կալուածս, այնպէս, զի բնակիչք նոցա ոչինչ հարկս հարցնն արքունեաց, այլ օթոսոյ միայն:

Սորին վեհափառութիւն ի 1837 ամի անկեալ ի մահիւնս հիւանդութեան, իսկոյն կոչեաց առ ինքն զբոլոր միաբանութիւն, բազում սիրով ևս իւրաքանչիւրումն զողջոյն հրաժարական, և կտակեալ զամենայն ստացուածս իւր զպտուղս բաղմամեայ վաստակոց իւրոց յօգուտ լուսաւորչեան օթոսոյն հրամայեաց պահել զայն ընդ օթոսապատկան ստացուածոց, և ապա իբրև ողջութիւն դտաւ շնորհիւ վերինն խնամոց հանգոյն եղեկիայի, անյապաղ ընդ տառն հազար արծաթ մանէթից իւրոց միացուցեալ և զայլ նոյնչափ քանակութեան օթոսապատկան գրամոց ևս ի գրամատակին արքունի ի շահիլ յօգուտ էջմիածնի, որ ցայսօր անդր գտանի:

Տես բարեմիտ աղգասէր, տես դու և խնդա ընդ բաղմարդիւն երկս քրանաջան հովուապետիդ զոր գրեմս աննենդ գրչաւ և գրեան գանուն նորա ի տարապատումս քո յանմոռաց յիշատակ յաւիտենից, խնդա և ընդ խնդութիւնդ բարերանեա զաստուած քո, որ յարոյց յազգի մերում զայսպիսի միակ բարեջան:

Իլւտ ծ. վարդապետ

20 փետր. 1920 թ.

ս. էջմիածին:

